DOI: 10.54503/1829-4324.2024.2-308

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 24.09.24, ուղարկվել է գրախոսման՝ 27.11.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

Ներածություն: Ներկա տնտեսական զարգացումները հանգեցրել են աշխատանքային միգրացիայի սերտաճմանը որակապես նոր, բարդ ու բազմաբովանդակ գործընթացների՝ այնչափ, որ այն կողմնորոշում ու պայմանավորում է համաշխարհային տնտեսության զարգացման ուղղություններն ու հնարավորությունները: Առանց աշխատանքային ռեսուրսների տեղաշարժի ազգային տնտեսությունների համաշխարհային վերարտադրությանը ներգրավման գործընթացը հնարավոր չէ: Ժամանակակից տնտեսական անկանխատեսելի գործընթացներում անընդհատ փոփոխվում է աշխատուժի միգրացիայի դերն ու բովանդակությունը. ի հայտ են գալիս հաղորդակցման ու փոխգործակցման նոր ձևեր, ձևավորվում է աշխատանքային հարաբերությունների նոր ձևաչափ, որը մեծ ազդեցություն է ունենում միգրացիոն գործընթացների վրա՝ պահանջելով պետական կարգավորման նոր մոտեցումներ, վերահսկողության նոր մեթոդներ, որով էլ պայմանավորված է թեմայի **արդիականությունը:**

Ուսումնասիրության հիմքում **նպատակ** է դրվել բացահայտել աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները և միգրացիոն քաղաքականության գերակայությունները թվային տնտեսությունում, որին հասնելու համար լուծվել են հետևյալ **խնդիրները**.

- բացահայտել աշխատանքային միգրացիայի դերը
- կարևորել միգրանտի իրավունքների պաշտպանության մեխանիզմները թվային տնտեսությունում
- առաջարկել միգրացիայի կառավարման պետական համակարգի բարեփոխումների և արդյունավետության բարձրացման ուղիներ ՀՀ-ում:

Գրականության ակնարկ: Չնայած միգրացիան ունի սոցիալ-տնտեսական հակասական բնույթ երկրները ձգտում են միգրացիայի պատշաճ կառավարման համատեքստում իրենց դերն ունենալ միգրացիայի և զարգացման փոխառնչությունների ամրապնդման գործում: Ձևավորվել է նոր տիպի տնտեսություն՝ տնտեսական կյանքի ձևի ու բովանդակության կերպարանափոխությամբ, ինչը Տնտեսական համաժողովի հիմնադիր (World Economic Forum) Կլաուս Շվաբը անվանել է Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն[1]:

1 Schwab, K., The Fourth Industrial Revolution, by Klaus Schwab, https://www.weforum.org/about/the-fourth-industrial-revolution-by-klaus-schwab/ Date of access: 19.05.2024.

«Ինչպես է փոխում միգրացիան մեր աշխարհը» աշխատության մեջ ականավոր տնտեսագետ Փոլ Քոլիերը միգրացիան ներկայացնում է ժամանակակից քաղաքական գործընթացի մի մասը[2]: Նոբելյան մրցանակակիր Հենրի Քիսինջերը 2018թ. հունիսին (Atlantic) ամսագրում հրապարակված «Ինչպես է ավարտվում լուսավորության դարաշրջանը» հոդվածում անդրադառնալով ԱԲ ազդեցությանը ու հետևանքներին, ընդհակառակը անհանգստանում է, որ այն սպառնում է հաղթահարել մարդու գիտակցությանը և շուտով կներթափանցի նաև կառավարման ոլորտ, որից անմասը չէ միգրացիան[3]: Սա համաշխարհային բիզնես առաջնորդների ամենալուրջ ճիշտ կառավարման խնդիրներից մեկն է: Capgemini-ի և LinkedIn-ի կողմից անցկացված գլոբալ հարցման արդյունքում պարզվել է, որ թվայնացման բացը մեծանում է, այն դեպում, որ հարցված կազմակերպությունների 54%-ը մրցակցային առավելությունները կորցրել է կադրերի պակասի պատճառով[4]:

Բիլ Գեյթսի առաջարկություններով, եթե օրինակ ռոբոտը գրավում է ինչ որ մեկի աշխատատեղը, նա ևս պետք է հարկ վճարի: Եվրոխորհրդարանը 2017-ին մերժեց այդ գաղափարը[5]: Աշխատանքի բաժանման նոր ձևաչափում ժամանակակից միգրանտը մի կողմից բավականին ընկղմված է աշխատանքի գլոբալ բաժանման մեջ, ինչն էլ նրան դարձնում է հանրային՝ ինտերնետային հանրույթում, իսկ մյուս կողմից ' նա կարող է տարանջատված լինել բոլոր հարաբերություններից՝ համալրելով «freelancers»-ի շարքերը[6]:

Միգրացիոն քաղաքականության տեսական դրույթները բազմակողմանիորեն քննարկվել է Լ. Ռիբակովսկու կողմից: Նա միգրացիայի ճիշտ կառավարումը համարում է ժողովրդագրական քաղաքականության հիմնական բաղադրիչ[7]:

---

2 Коллиер, П., Исход: как миграция изменяет на мир / пер. с англ. Н. Эдельмана. М.: Изд-во Института Гайдара, 2017, ст 24-25

3Kissinger, H., How the Enlightenment Ends, The Atlantic, 2018, available at: https://www.theatlantic.com/magazine/archive/2018/06/henry-kissinger-ai-could-mean-the-end-of-human-history/559124/ Date of access: 19.05.2024.

4 World Economic Forum, Why are young people not prepared for the jobs of the future?, Oct 12, 2022, available at: https://www.weforum.org/agenda/2022/10/why-are-young-people-not-preparing-for-the-jobs-of-the-future/ Date of access: 19.05.2024

5 European Parliament, Economic impacts of artificial intelligence (AI), 2019. P 1-8, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2019/637967/EPRS_BRI(2019)637967_EN.pdf

6 Садовая, Е., Цифровая экономика и новая парадигма рынок труда / / мировая экономика и международные отношения. 2018. Т. д. 62. № 12. Страницы 35-45:

7 Рыбаковский, Л., Демографическое будущее России: прогнозы и реальность // Народонаселение. 2023. Том. 26. № 3. С. 4-15.DOI: https://doi.org/10.19181/population.2023.26.3.1. EDN: ILGXMB

Մեթոդաբանությունը: Վերլուծության հիմքը հանդիսացել են միգրացիայի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները և տնային տնտեսությունների շրջանում իրականացված հարցման արդյունքները, «Միգրացիայի համաշխարհային զեկույց»-2024-ը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Տարածաշրջանները մի հայացքով-2018» զեկույցը, կիրառվել է վերլուծության ու համադրման մեթոդը:

Վերլուծություն: Աշխատանքային միգրանտ է համարվում մարդը, ով ֆիզիկական ու իրավաբանական անձանց մոտ աշխատանքի անցնելու նպատակով մեկնում է մեկ այլ երկիր[8]: Աշխատանքի միջազգային կազմակերպության 2024թ. հաշվետվության տվյալների համաձայն՝ աշխարհում աշխատանքային միգրանտների թիվը 2023-ին հասել է գրեթե 170 միլիոնի կամ ընդհանուրի 60.1%[9]: Առհասարակ, վերջին 60 տարիների ընթացքում միգրանտների մասնաբաժինը կազմում է համաշխարհային բնակչության մոտ 3 %-ը, զարգացած երկրներում այն կազմում է 7-12%, զարգացող երկրներում՝ 2%[10]: ՄԱԿ-ի կանխատեսումներով առաջիկա 40 տարվա ընթացքում, աշխատանքային միգրանտների թվի հարաբերակցությունը միջինում կպահպանի նշված մակարդակը(3%)՝ նույնիսկ ցուցանիշների բացարձակ թվերի աճի դեպքում[11]:

Աշխատանքային միգրանտների բարձր տեսակարար կշիռը առավել զարգացած տարածաշրջաններում, փաստում է՝ հիմնական նպատակն արժանապատիվ աշխատանք գտնելն է: Գործազրկության և բնակչության աճի հետ մեկտեղ աշխատանքային միգրացիան հանդես է գալիս որպես համաշխարհային տնտեսության աճի հիմնական աղբյուր: Միգրանտի կայացրած որոշումը տնտեսական հետևանքներ է ունենում ինչպես ուղարկող երկրներում, այնպես էլ ընդունող երկրներում՝ ունենալով շոշափելի դրական ու բացասական ազդեցություններ սոցիալ-տնտեսական փոխառնչություններում: Միգրացիոն գործընթացներում ընդգրկված տղամարդկանց երկարատև բացակայության պատճառով աղավաղվում են ընտանեկան հարաբերությունները, կրճատվում՝ ամուսնությունների թիվը, աճում՝ ամուսնալուծությունները, անկում է նկատվում

---

8 Աթոյան, Կ., Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները ՀՀ-ում, 2015, Երևան, էջ12, https://library.asue.am/open/sh0001.pdf

9McAuliffe, M., Oucho, L., (eds.). World Migration Report 2024. Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), p. 1. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024

10 Марго, М., Роберто, П., Гален, Ш., Филипп, Э., Миграция в страны с развитой экономикой может повысить темпы экономического роста, Население и демографические показатели, https://www.imf.org/ru/Blogs/Articles/2020/06/19/blog-weo-chapter4-migration-to-advanced-economies-can-raise-growth

11 Նույն տեղում

երեխաների դաստիրակության ու նրանց սոցիալականացման մակարդակում: Մտավոր ներուժի արտահոսքը սպառնում է երկրի ազգային անվտանգությանը, միգրացիոն շարժը շարունակում է մնալ երկրում հետագա էմիգրացիայի աճի խթան, իսկ էմիգրանտների կյանքի պայմաններն ու աշխատանքային գործընթացը լի են սպառնալիքներով ու ռիսկերով: Բնակչության աշխատանքային միգրացիոն վարքագիծը կարող է նաև որոշակի դրական ազդեցություն ունենալ ընդունող երկրի մարդկային կապիտալի քանակական ու որակական պարամետրերի, հետևաբար նաև երկրի տնտեսական զարգացման հեռանկարների վրա: Ընդ որում, ովքեր ակնկալում են երկար մնալ ընդունող երկրում, ավելի արագ են ինտեգրվում այդ երկրի հասարակությանը ու դրական են ազդում տնտեսական գործընթացներին: Երկար ժամկետով միգրանտները ժամանման երկրում հասցնում են տեղեկություններ հավաքագրել ու պաշտպանել իրենց իրավունքները: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) 2018թ. հրապարակած «Տարածաշրջանները մի հայացքով-2018» իր զեկույցում նշում է, որ երկարաժամկետ աշխատանքային միգրանտները հակված են ավելի դրական ֆինանսական ազդեցություն ունենալ հյուրընկալող երկրներում, քան ընտանիքի վերամիավորման ծրագրերով միգրանտները, իսկ երիտասարդ աշխատանքային միգրանտները երկիր մուտք գործելուց անմիջապես հետո վճարում են ավելի շատ հարկեր, քան ընդունող պետության կողմից նրանց վրա կատարվող ծախսերն են[12]: Ըստ միջազգային վերլուծությունների, միգրանտների հարկային վճարումները ԱՄՆ-ում 2022թ. կազմել են 96.7 միլիարդ դոլար, որից՝ 25.7 միլիարդ դոլարը սոցիալական ապահովության հարկերն են[13]: Բարձր որակավորում ունեցող միգրանտները լրացնում են այն թափուր տեղերը, որոնք համապատասխան մասնագետներով հնարավոր չէ լրացնել, իսկ ցածր որակավորում ունեցող միգրանտներն ստանձնում են այն աշխատատեղերը, որոնք տեղացիները հարմար չեն գտնում զբաղեցնել[14]: Ժամանակավոր միգրացիան որևէ դրական տնտեսական հետևանք կարող է չունենալ ընդունող

12 Please cite this publication as OECD, OECD Regions and Cities at a Glance 2018, OECD Publishing, Paris https://doi.org/10.1787/reg_cit_glance-2018-en, OECD, 2018, p 88-95,

13 Dadush, U. The Effect of Low-Skilled Labor Migration on the Host Economy. KNOMAD, 2014., p 14-30, https://www.knomad.org/sites/default/files/201704/KNOMAD%20Working%20Paper%201%20Dadush%20Effect%20of%20Low%20Skilled%20Labor.pdf

14 Արժանապատիվ աշխատանք որոնելիս՝ աշխատանքային միգրանտների իրավունքները: Ձեռնարկ արհմիության անդամների համար, 2010, Երևան, Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ժնև, ԱՄԿ,էջ 43, www.ilo.org/publns

երկրում, իսկ հայրենիքում՝ ունենալ դրական ազդեցություն[15]: Խոսքը վերաբերում է, նախ և առաջ բարձրագույն կրթությամբ մասնագետների վերադարձին, որոնց մասնագիտական կրթության ծախսերը գնահատվում են բարձր (օրինակ, 2022-ին Իսլանդիայում այս ցուցանիշը կազմում է 7.7%, ԱՄՆ-ում՝ 6.1%, ԵՄ-ում՝ 4.5%, իսկ ամբողջ աշխարհում՝ 4.2%)[16]:

Չնայած միգրացիան ունի սոցիալ-տնտեսական հակասական բնույթ, գնալով ավելի խորն ըմբռնելով երևույթի դերը, միգրանտների ծագման, տարանցման և ժամանման երկրները, ձգտում են միգրացիայի պատշաճ կառավարման համատեքստում իրենց դերն ունենալ միգրացիայի և զարգացման փոխառնչությունների ամրապնդման գործում, հատկապես՝ «հավասար վարձատրություն նմանօրինակ աշխատանքի դիմաց», «աշխատավարձերից անօրինական գանձումների արգելք», «պաշտպանություն աշխատանքից ազատելուց», «մասնագիտական ուսուցում ստանալու հնարավորություն», «տվյալ երկրի քաղաքացիների իրավունքներին հավասար իրավունքներ»՝ կապված աշխատանքային նախկին փորձի հետ (մասնավորապես՝ վարձատրություն և սոցիալական ապահովություն), որոնք նոր մոտեցումներ են պահանջում թվայնացված տնտեսությունում: Միգրացիոն նոր հոսքերն ու գործընթացները առաջ են բերում «կյանքի նոր որակի» հիմնախնդիրների նոր մեկնաբանություններ՝ արագ անցում սաստիկ խոցելիությունից դեպի դիմացկուն անհատականություն[17]:

Թվային առանցքային տեխնոլոգիաները նոր հնարավորություններ են ստեղծում երկրների տնտեսությունների համար՝ ձևավորելով սոցիալական ու աշխատանքային հարաբերությունների նոր ձևաչափ: Նոր հարաբերություններում թվային մոդելը պահանջում է անհրաժեշտ առանձնահատկություններով ձևավորված թվային աշխատող, որը տարբերվում է դինամիկ փոփոխվող գիտելիքներով, հմտություններով և կարողություններով: Աշխատանքի բաժանման նոր ձևաչափում ժամանակակից միգրանտը մի կողմից բավականին ընկղմված է աշխատանքի գլոբալ բաժանման մեջ, ինչն էլ նրան դարձնում է հանրային՝ինտերնետային հանրույթում, իսկ մյուս կողմից ' նա կարող է անջատված լինել բոլոր հարաբերություններից՝ համալրելով

15 Görlach, J., Kuske, K., Temporary migration entails benefits, but also costs, for sending and receiving countries, https://wol.iza.org/articles/temporary-migration-entails-benefits-but-also-costs-for-sending-and-receiving-countries/long

16 Education at a Glance 2015. OECD. URL: http://www.oecd-ilibrary.org/education/educationat-a-glance-2015_eag-2015-en

17 Պողոսյան, Շ., Երևան, Միգրացիոն հոսքերը թվային փոխակերպումների համատեքստում,Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, գիտական հոդվածների ժողովածու, 2024, էջ 154

«freelancers»-ի շարքերը[18]: Տնտեսության թվայնացման գործընթացի երկակիությունը դրսևորվում է նոր որակի աշխատուժի ու աշխատատեղերի ստեղծմամբ և ավանդական հմտություններով ու մասնագիտություններով աշխատողների ու աշխատատեղերի դուրսմղմամբ, որը՝ անտարակույս, ազդում է միգրացիոն հոսքերի ձևավորման վրա[19]:

Թվայնացման գործընթացը նպաստում է նաև սոցիալական վարքի նոր նորմերի ստեղծմանը, որոնք հիմնված են թվային տեխնոլոգիաների օգտագործման վրա, ինչը թույլ է տալիս հասնել տնտեսվարող սուբյեկտների միջև վստահության բարձր մակարդակի[20]: Մի կողմից, փոխակերպվում են միգրանտի՝ որպես աշխատուժի վարձման համակարգերն ու պայմանները, քանի որ որպես արտադրության միջոցներ կիրառվում են աշխատանքի անմիջական կատարողի սեփականություն հանդիսացող թվային գործիքները (ֆրիլանսի կամ այլ դեպքերում)[21]: Մյուս կողմից սահմանափակվում են նրանց աշխատանքի ու աշխատաժամանակի վերահսկողության հնարավորությունները, որոնք կարող են առաջացնել սոցիալական բազմաբնույթ ռիսկեր՝ ֆորմալ զբաղվածության անկում, միգրանտների իրավունքների պաշտպանության մի շարք մեխանիզմների կորուստ, պատվիրատուների հետ վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմների բացակայություն և այլ:

Այսպիսի պայմաններում առանձնահատուկ հետաքրքրություն է զարգանում բարձր որակավորում ունեցող միգրանտների նկատմամբ՝ «ուղեղների արտահոսք» միգրացիան փոխակերպելով «նորարարական-ինտելեկտ» ձևի: Այսպես, 2010-ականներից աշխարհում բարձրագույն կրթություն ունեցող միգրանտների թիվն աճել է 130%-ով, իսկ միջին և ցածր որակավորում ունեցող միգրանտներինը՝ 40%-ով: Մասնագետների գնահատմամբ բարձր որակավորմամբ միգրանտի «կյանքի ցիկլը» կձգվի 10-15 տարի[22]: Այս ընթացքում նա բավարար հնարավորություն ունի դրսևորվելու ու դեպի հայրենիք արտահանելու իր մասնագիտական կարողությունները, կուտակած փորձն ու

---

18 Садовая, Е., Цифровая экономика и новая парадигма рынок труда / / мировая экономика и международные отношения. 2018. Т. д. 62. № 12. Страницы 35-45:

19 Аюпов, А. [и др.]. Цифровая трансформация экономики: теория и практика в интеграционных союзах. под общ. ред. М. Зеленкевич, Н.Бондаренко. Минск : Институт бизнеса БГУ, с.171, ISBN 978-985-7214-35-8, 2020

20 Նույն տեղում, էջ 172-175

21 Василенко, Н., Трансформация и освобождение труда в условиях новой экономики, Инновационная экономика и промышленная политика региона (ЭКОПРОМ-2016): труды международной научно-практической конференции 22-24 сентября 2016 года, под ред. д-ра экон. наук, проф. Бабкина А.В., Издательство Политехнического университета, Санкт-Петербург, 2016, с. 37.

22 Նույն տեղում, էջ 37.

կապիտալը: Ավելին, 2018 թվականին ՏԶԿ հրապարակած «Տարածաշրջանները մի հայացքով-2018» զեկույցում նշված է, որ նույնիսկ արդյունաբերական զարգացման բարձր մակարդակում գտնվող երկրներ մեկնած յուրաքանչյուր հինգ աշխատանքային միգրանտներից երկուսը 5 տարվա ընթացքում վերադառնում են իրենց երկրներ:

Այսպիսով, թվային տնտեսությանն անցումը դառնում է նաև բոլոր երկրների համար միգրացիոն քաղաքականության իրականացման առաջնահերթություն, ու բոլոր մասնակիցներին ընձեռվում է «թվային» օգուտներ քաղելու հավասար հնարավորություններ: Կանադան ներգաղթի և ապաստանի որոշման կայացման մեջ օգտագործում է ալգորիթմական որոշումներ, Շվեյցարիայում փախստականների ինտեգրումը ներկայումս փորձարկվում է ալգորիթմներով, ԵՄ Շենգենյան տեղեկատվական համակարգում միգրանտների ելքի ու վերադարձի գործընթացը պարզեցնելու նպատակով օգտագործվում է դեմքի, կենսաչափական տվյալների ճանաչման և ԴՆԹ-ի որոշման ալգորիթմներ, Գերմանիան իրականացրել է պիլոտային նախագծեր՝ օգտագործելով այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են դեմքի և լեզվի, բարբառների ավտոմատ ճանաչումը, ծագման երկրի և ինքնության տվյալների վերլուծությունն ու անունների տառադարձումը, հույզերի ու սեռի ճանաչումը, որն ընդունակ է գնահատելու ու որոշելու միգրանտի նկատմամբ վստահությունը: Շվեդիայի իշխանությունները ձգտում են ստեղծել «միգրացիայի ալգորիթմներ», որոնք կկանխատեսեն «միգրացիոն ճգնաժամերը», իսկ միգրանտ ընդունող երկրները, օրինակ Բրազիլիան, դրանք կօգտագործեն միգրացիոն հոսքի ու ռիսկի կառավարման ոլորտում: Այսպիսի թվային փոխակերպումը հնարավորություն է տալիս ծառայությունների արագ հասանելիությամբ ու ժամանակի խնայողությամբ իրականացնել ինքնության ստուգում, պաշտպանություն և սահմանների վերահսկում, վիզայի և ապաստանի համար դիմած անձանց վերաբերյալ տվյալների վերլուծություն, միգրանտների գրանցում, հաշվառում ու փաստաթղթերի թողարկում:

Այսօր թվայնացման մոդելներով խստացվում են ՌԴ-ի միգրացիոն գործընթացների վերահսկողության մեխանիզմները, հատկապես, երկիր ժամանող օտարերկրացիների ինքնության հավաստի հաստատման ուղղությամբ: Ստեղծվում է «Պրոֆիլ» թվային համակարգը, որտեղ կմիավորվեն տարբեր գերատեսչական համակարգերում պարունակվող միգրացիոն հաշվառման տվյալները: Համակարգում նախատեսվում է օգտագործել նաև կենսաչափական տվյալներ: Առանց վիզայի մուտք գործող օտարերկրյա քաղաքացիները նախատեսված ժամանումը կարող են գրանցել էլեկտրոնային ծանուցմամբ՝ օգտագործելով թվային պրոֆիլը: Հարթակը միգրանտներին թույլ կտա օգտվել նաև «պետական ծառայություններից»: Գրանցամատյանում գրանցված անօրինական միգրանտների համար կսահմանվեն լրացուցիչ սահմանափակումներ՝ կապված ամուսնությունների գրանցման, անշարժ գույք և

տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու ու վարելու, վարկեր վերցնելու, երկրում ազատ տեղաշարժվելու, բանկային հաշիվների միջոցներից օգտվելու հետ: Ցուցակում հայտնված միգրանտները պարտավոր կլինեն ոստիկանությանը տեղեկացնել իրենց գտնվելու վայրի մասին, այդ թվում՝ գեոլոկացիայով լուսանկարներ ուղարկելով: Իրավապահ մարմինների աշխատակիցները իրենց վերահսկողության ընթացքում կօգտվեն այդ տեղեկությունների և միգրանտների շարժական սարքերի տվյալների հասանելիությունից:

Հայաստանի թվային ինտեգրման խնդիրը դրված է Կառավարության թվայնացման ռազմավարության 2020-2025 ծրագրում: Երկրի թվային տնտեսության մրցունակությունը և նշված համատեքստում ինտեգրումը ապահովելու նպատակով թվային զարգացման դինամիկայի, սահմանված սկզբունքների և չափանիշների մասով պարբերական վերլուծություններ են իրականացվում ԵԱՏՄ (Եվրասիական տնտեսական միություն), ԱլԳ (Արևելյան գործընկերություն), ԵՄ (Եվրոպական Միություն) և Միջին Արևելքի երկրներում: Ներկայումս միգրացիայի ոլորտում ներդրվել են ԵՄ-Հայաստան ռեադմիսիոն կառավարման էլեկտրոնային համակարգ (2019 թ.), Work permit համակարգ (2022 թ.) և ապաստանի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգ (2022 թ.) թվայնացված ծառայությունները[23]: Վարչական գործընթացների թվայնացումը և կացության թույլտվությունների տրամադրումը, նույնականացման քարտերի և կենսաչափական անձնագրերի նոր համակարգի մշակումն ու ներդրումը նոր հնարավորություններ են ստեղծում նաև միգրանտի համար: 2022թ. օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակը աշխատանքի թույլտվության գործընթացում ներառված բոլոր պետական մարմիններին միաժամանակյա հասանելիության հնարավորություն է ապահովում՝ կրճատելով գործընթացի վրա ծախսվող ժամանակը և բարելավելով վարչարարությունը: Պարզեցվել է միգրանտին աշխատանքի թույլտվության տրամադրման ընթացակարգը: Եթե նախկինում աշխատանքի թույլտվությունը տրամադրվում էր գործատուին, որպես օտարերկրացուն աշխատանքի ընդունելու հիմք, նոր կարգավորումներով այն իրենից ներկայացնում է էլեկտրոնային հարթակում հաստատում, որով օտարերկրացին ստանում է ժամանակավոր կացության կարգավիճակ[24]: Արդյունքում կրճատվում է վարչարարությունը, թեթևանում թե՛ գործատուի և թե՛ օտարերկրացու բեռը:

---

23 ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2022.arm.pdf

24 Internacional Center for Migration Policy Development, Return and Reintegration Facility (2021). Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021), Երևան, 54 էջ, https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf

Միգրացիայի պետական կարգավորման առանցքային տարր է հանդիսանում աշխատանքային միգրացիայի կարգավորումը, որտեղ կարևորվում է ԵԱՏՄ և ԵՄ անդամ երկրներում միգրացիոն հարաբերությունների օրենսդրական կարգավորումները:

2015-ից անդամակցելով ԵԱՏՄ պայմանագրին՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց անդամ պետությունների տարածքում ապահովելու աշխատանքի միասնական շուկա և աշխատուժի ազատ տեղաշարժ: Իսկ 2017 թվականին Եվրոպական միության հետ կնքելով Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունն իր միգրացիոն քաղաքականության կարևոր մաս դարձրեց անկանոն միգրացիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի ընդլայնումը, վիզային քաղաքականության բարեփոխումը և այլն:

Հայաստանի միգրացիոն կառավարման ազգային ռազմավարությունը կարևորում է աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանությունը, աշխատանքային միգրացիայի հեշտացմանն ուղղված միջոցառումները, միգրացիայի զարգացման ազդեցությունը: Այդ են վկայում ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքները. 2018-2021թթ ժամանակահատվածում հարցվածների 53.5%-ը եղել են վարձու աշխատողներ, ինքնազբաղված՝ 19.8%-ը, 4.3%-ը՝ գործատու: Եթե Ռուսաստան միգրացվածների 58.3%-ն է վարձու աշխատող, ապա ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 49.8% և 44.4%:

Այն փաստը, որ Հայաստանից էմիգրացման հիմնական պատճառներն առնչվում են աշխատաշուկայի հիմնախնդիրներին՝ աշխատանքի ու ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությանը, և ամենակարևորը՝ կյանքի որակ ապահովող վարձատրությամբ աշխատատեղերի պակասին, հաստատվում է նաև ՏՏԿԱՀ արդյունքներով: Միգրացիայի ամենաակտիվ ուղղությունը, ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, Ռուսաստանի Դաշնությունն է, որտեղ գտնվում է վերջին տարիներին էմիգրացվածների 62.4%-ը (92.5 հազար մարդ), վերադարձածների շրջանում գերակշռել է ՌԴ-ից վերադարձածների մասնաբաժինը (70.4%)[25]: Դեպի Ռուսաստան էմիգրացվածների կազմում աշխատանքային միգրացիան ունի շատ բարձր մասնաբաժին՝ 88.8%: Էմիգրացիայի «ռուսաստանյան» կողմնորոշումը պայմանավորված է տնտեսական գործոնով (վիզայի բացակայություն, աշխարհագրական դիրք, ավտոմոբիլային տրանսպորտի առկայություն), սոցիալ-

25 Միգրացիոն պատկերը հայաստանի հանրապետությունում, 2019թ. 2021, Երևան, (Ըստ 2019թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության կշռված արդյունքների), https://armstat.am/file/article/migration_profile_arm__2019_2.pdf, էջ 9

հոգեբանական միջավայրի սկզբունքային համատեղելիությամբ, լեզվի բարդույթի բացակայությամբ[26]:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով էմիգրանտների զբաղվածության կարգավիճակում տեղի են ունեցել կառուցվածքային էական տեղաշարժեր: Մեկնած միգրանտների գերակշիռ մեծամասնության՝ 69.2%-ի տնտեսական գործունեությունը եղել է շինարարության ոլորտում, այն դեպքում, որ շինարարության ոլորտի աճ է գրանցվել բացառապես ՀՀ բոլոր մարզերում, 12% ծառայությունների՝ այն դեպքում, երբ երկրում աշխատուժի պահանջարկի գերակշիռ մասը այդ ոլորտում է, սակայն ոլորտի աշխատավարձի մակարդակների խիստ տարբերությունը առաջ է բերում նոր արտահոսք: Մեկնածների ընդհանուր թվաքանակի մեջ գործատուները կազմում են 7.7%: Վերադարձածների 70.3%-ը հայրենիքում շարունակել է ունենալ միգրացիոն շրջանի զբաղվածությունը[27]:

Փաստ է, որ վերադարձը և անօրինական միգրացիայի կանխումը պայմանավորված է հայրենիքում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու հնարավորությամբ:

Այսպիսով, ժամանակի իրողություններում (ռուս-ուկրաինական հակամարտություն, ՔՈՎԻԴ-19) միգրացիայի երևույթը քննարկել միայն տնտեսական տեսանկյունից հնարավոր չէ, այն իր բարդ կապերով միահյուսվել ու ի հայտ է գալիս նոր խնդիրներով՝ կապված ազգային հարաբերությունների, փախստականների միջազգային իրավունքի նորմերի, քաղաքական մշակույթի ձևավորման հետ: Թվային աշխարհում Հայաստանի ու համագործակցող պետությունների առջև ծառացած հիմնական խնդիրն է, որպեսզի ապահովվի երկրների ոչ հակամարտային և բարեկեցիկ զարգացումը, նրանց հետագա տնտեսական, քաղաքական, մշակութային և սոցիալական բարգավաճումը: Ամփոփելով՝ առաջարկում ենք.

- կիրառել մտավոր ներուժի արտահոսքի կրճատման ու կարգավորման մեխանիզմներ,
- հարստացնել Հայաստանի սրտաթափ էկոհամակարգը՝ խթանելով սփյուռքից նորարար, ընդարձակվող տեխնոլոգիական սարսափների ներհոսքը,

---

26 Թադևոսյան, Զ., Բուլանիկյան, Վ., Ավետիսյան, Թ., Մկրտչյան, Տ., Հայրապետյան, Ա. 2024, Երևան, Երիտասարդների աշխատանքային միգրացիայի ազդեցությունը եվ կանխարգելման հնարավորությունները համայնքների ժողովրդագրական իրավիճակի փոփոխության գործընթացում, DOI: 10.52174/978-9939-61-282-9, էջ 72,

27 Միգրացիոն պատկերը հայաստանի հանրապետությունում, 2019թ. 2021, Երևան, (Ըստ 2019թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության կշռված արդյունքների), https://armstat.am/file/article/migration_profile_arm__2019_2.pdf, էջ 11

- միգրացիոն քաղաքականության մեջ հաշվի առնել այն, որ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով կշարունակվի SS ոլորտի միգրացիան դեպի ՀՀ տնտեսություն
- օտարերկրյա ներդրողների համար տեղեկատվության ստացումը կլինի ավելի թափանցիկ և հասանելի միասնական տեղեկատվական հարթակի առկայության դեպքում ՝ նաև օտար լեզվով
- ներդնել մարդկային տեղաշարժի անօրինական ծառայություններ մատուցող կայքերի արգելափակման մեխանիզմ:

Գիտական նորույթ: Բացահայտվել է ՀՀ աշխատանքային տեղաշարժի առանձնահատկությունները թվային պայմաններում և հիմնավորվել է երկրի միգրացիոն քաղաքականության գերակայությունները թվային տնտեսությունում:

Եզրակացություն: Աշխատանքի բաժանման նոր ձևաչափում ժամանակակից միգրանտը մի կողմից բավականին ընկղմված է աշխատանքի գլոբալ բաժանման մեջ, ինչն էլ նրան դարձնում է հանրային, իսկ մյուս կողմից մնալով իր կարգավիճակում՝ նա կարող է տարանջատված լինել բոլոր հարաբերություններից: Թվային տնտեսությունը պահանջում է միգրանտների իրավունքների պաշտպանության մի շարք մեխանիզմներ, ինստիտուցիոնալ փոփոխություններ, որի պատասխանատուն պետությունն է իր վարած քաղաքականությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթոյան, Կ., Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները ՀՀ-ում, 2015, Երևան, էջ12,
https://library.asue.am/open/sh0001.pdf
2. Թադևոսյան, Զ., Բուլանիկյան, Վ., Ավետիսյան, Թ., Մկրտչյան, Տ., Հայրապետյան, Ա., Երևան, Երիտասարդների աշխատանքային միգրացիայի ազդեցությունը եվ կանխարգելման հնարավորությունները համայնքների ժողովրդագրական իրավիճակի փոփոխության գործընթացում, DOI: 10.52174/978-9939-61-282-9, 2024175 էջ
3. ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2022.arm.pdf
4. Միգրացիոն պատկերը հայաստանի հանրապետությունում, Երևան, (Ըստ 2019թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության կշռված արդյունքների), 2019,
https://armstat.am/file/article/migration_profile_arm__2019_2.pdf, էջ 80.

5. Аюпов, А., [и др.]. Цифровая трансформация экономики: теория и практика в интеграционных союзах. под общ. ред. М. Зеленкевич, Н. Бондаренко. Минск: Институт бизнеса БГУ, 227 с. ISBN 978-985-7214-35-8. 2020
6. Василенко, Н., Трансформация и освобождение труда в условиях новой экономики, Инновационная экономика и промышленная политика региона (ЭКОПРОМ-2016): труды международной научно-практической конференции 22-24 сентября 2016 года, под ред. д-ра экон. наук, проф. Бабкина А.В., Издательство Политехнического университета, Санкт-Петербург, 671с.,
7. Марго, М., Роберто П., Гален, Ш., Филипп, Э., Миграция в страны с развитой экономикой может повысить темпы экономического роста, Население и демографические показатели, https://www.imf.org/ru/Blogs/Articles/2020/06/19/blog-weo-chapter4-migration-to-advanced-economies-can-raise-growth
8. Михайленко, Н., Международная миграция труда и ее влияние на национальные экономики. Управление. 2019;7(3):127-132., https://upravlenie.guu.ru/jour/article/view/225/194
9. Рыбаковский, Л. Демографическое будущее России: прогнозы и реальность // Народонаселение. 2023. Том. 26. № 3. С. 4-15.DOI: https://doi.org/10.19181/population.2023.26.3.1. EDN: ILGXMB
10. Коллиер, П. , 2017.,Исход: как миграция изменяет на мир / пер. с англ. Н. Эдельмана. М.: Изд-во Института Гайдара, .384ст
11. Садовая, Е., Цифровая экономика и новая парадигма рынок труда / / мировая экономика и международные отношения. 2018. Т. д. 62. № 12. Страницы 35-45:
12. European Parliament, Economic impacts of artificial intelligence (AI), 2019. P 1-8, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2019/637967/EPRS_BRI(2019)637967_EN.pdf
13. Internacional Center for Migration Policy Development, Return and Reintegration Facility (2021). Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (2018-2021), Երևան, 58 էջ, https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/Armenian-EMP-2018-2021.pdf
14. Kissinger, H., How the Enlightenment Ends, The Atlantic, 2018, available at: https://www.theatlantic.com/magazine/archive/2018/06/henry-kissinger-ai-could-mean-the-end-of-human-history/559124/
15. McAuliffe, M., Oucho, L. (eds.). World Migration Report 2024. Geneva, Switzerland: International Organization for Migration (IOM), p. 1. Retrieved from: https://publications.iom.int/system/files/pdf/pub2023-047-l-world-migration-report-2024_0.pdf. Date of access: September 5, 2024.,384p.
16. Schwab, K., The Fourth Industrial Revolution, by Klaus Schwab, https://www.weforum.org/about/the-fourth-industrial-revolution-by-klaus-schwab/ Date of access: 19.05.2024

17. World Economic Forum, “Why are young people not prepared for the jobs of the future?”, Oct 12, 2022, available at: https://www.weforum.org/agenda/2022/10/why-are-young-people-not-preparing-for-the-jobs-of-the-future/ Date of access: 19.05.2024

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածի արդիականությունը: Մարդկային քաղաքակրթությունը թևակոխում է էվոլյուցիայի մի նոր մակարդակ, որի վերաբերյալ ապագայի կանխատեսումները մի քանի բևեռի են բաժանվել: Ժամանակակից տնտեսական անկանխատեսելի գործընթացներում անընդհատ փոփոխվում է աշխատուժի միգրացիայի դերն ու բովանդակությունը, թվային գլոբալիզացիայի ժամանակաշրջանում ի հայտ են գալիս հաղորդակցման ու փոխգործակցման նոր ձևեր, ձևավորում է աշխատանքային հարաբերությունների նոր ձևաչափ, որը մեծ ազդեցություն է ունենում միգրացիոն գործընթացների վրա՝ պահանջելով պետական կարգավորման նոր մոտեցումներ, վերահսկողության նոր մեթոդներ, որով պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հոդվածի նպատակը: Հոդվածի նպատակն է բացահայտել աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները և միգրացիոն քաղաքականության գերակայությունները թվային տնտեսությունում: Նպատակի իրացման համար հետազոտության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել արտաքին աշխատանքային միգրացիայի դերը
- կարևորել միգրանտի իրավունքների պաշտպանության մեխանիզմները թվային տնտեսությունում
- տալ միգրացիայի կառավարման պետական համակարգի բարեփոխումների և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:

Մեթոդաբանությունը: Վերլուծության հիմքը հանդիսացել են միգրացիայի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները և տնային տնտեսությունների շրջանում իրականացված հարցման արդյունքները, «Միգրացիայի համաշխարհային զեկույց»-2024-ը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Տարածաշրջանները մի հայացքով-2018» զեկույցը, վերլուծության ու համադրման մեթոդը:

Ստացված արդյունքներ: Աշխատանքի բաժանման նոր ձևաչափում ժամանակակից միգրանտը մի կողմից բավականին ընկղմված է աշխատանքի

գլոբալ բաժանման մեջ, ինչն էլ նրան դարձնում է հանրային, իսկ մյուս կողմից մնալով իր կարգավիճակում՝ նա կարող է տարանջատված լինել բոլոր հարաբերություններից: Թվային տնտեսությունը պահանջում է միգրանտների իրավունքների պաշտպանության մի շարք մեխանիզմներ, ինստիտուցիոնալ փոփոխություններ, որի պատասխանատուն պետությունն է իր վարած քաղաքականությամբ:

Գիտական նորույթ: Բացահայտվել է ՀՀ աշխատանքային տեղաշարժի առանձնահատկությունները թվային պայմաններում և հիմնավորվել է երկրի միգրացիոն քաղաքականության գերակայությունները թվային տնտեսությունում:

Բանալի բառեր: Աշխատանքային միգրացիա, թվային տնտեսություն, թվային մարդ, թվային կառավարում

МЕХАНИЗМЫ РЕГУЛИРОВАНИЯ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В АРМЕНИИ В УСЛОВИЯХ ЦИФРОВОЙ ЭКОНОМИКИ

ЛИЛИК БЕГЛАРЯН

Аннотация

Актуальность статьи. Человеческая цивилизация выходит на новый уровень эволюции, и предсказания будущего разделились на несколько лагерей. В современных непредсказуемых экономических процессах роль и содержание миграции рабочей силы постоянно меняются, в эпоху цифровой глобализации появляются новые формы общения и взаимодействия, формируется новый формат трудовых отношений, который оказывает большое влияние на миграционные процессы, требуя новых подходов и новых методов контроля в государственном регулировании, чем обусловлена актуальность темы.

Цель статьи – выявить особенности трудовой миграции и приоритеты миграционной политики в условиях цифровой экономики. Для достижения цели в основу исследования были поставлены следующие задачи:

- определить роль внешней трудовой миграции
- подчеркнуть механизмы защиты прав мигрантов в цифровой экономике
- констатировать необходимость реформирования и повышения эффективности государственной системы управления миграцией.

Методология. Основой анализа послужили официальные статистические данные по миграции и результаты опроса домохозяйств, «Доклад о мировой миграции»-2024, доклад «Регионы взору-2018» Организации экономического сотрудничества и Развитие (ОЭСР), метод анализа и сравнения:

Полученные результаты. Как новая форма общения и взаимодействия, цифровизация формирует новую систему трудовых отношений на рынке труда.

Цифровая экономика требует механизмы защиты прав мигрантов, ответственность за которые несет государство проводимой им политикой.

Научная новизна. Выявлены особенности трудовой миграции в Армении в условиях цифровой экономики, а также обоснованы приоритеты миграционной политики в цифровой экономике страны.

Ключевые слова. Трудовая миграция, цифровая экономика, цифровой человек, цифровое управление.

REGULATION MECHANISMS FOR LABOR MIGRATION IN THE SCOPE OF THE DIGITAL ECONOMY: THE CASE OF ARMENIA

LILIK BEGLARYAN

Abstract

The relevance of the article. In modern unpredictable economic processes, the role and content of labor migration are constantly changing, new forms of communication and interaction are emerging in the era of digital globalization, and a new format of labor relations is being formed, which has a great impact on migration processes, requiring new approaches and new methods of control in state regulation, where the relevance of this article lies.

This article aims to identify the features of labor migration and the priorities of migration policy in the scope of the digital economy. The following **research objectives** were set in the scope of the study:

- to identify the role of external labor migration,
- to highlight the mechanisms for protecting the rights of migrants in the digital era,
- to state the need for reforms and improvement in the state migration management system.

Main findings. As a new form of communication and interaction, digitalization forms a new system of labor relations in the labor market. The digital economy requires mechanisms to protect the rights of migrants, where the State is responsible for its policies.

Scientific novelty. The features of labor migration in Armenia in the context of the digital economy were identified, and the priorities of the country's migration policy in the digital economy have been substantiated.

Keywords. Labor migration, digital economy, digital man, digital management.